«Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ–1 արևային ֆոտովոլտայիկ ծրագրի» համար նախաորակավորման գործընթացի վերաբերյալ հայտարարություն

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը» (Հիմնադրամ) ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հանձնարարականով փնտրում է մասնավոր ընկերությունների կամ կոնսորցիումների՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում տեղակայված, ցանցին միացված «Մասրիկ-1 55 ՄՎտպ հզորությամբ արևային ֆոտովոլտայիկ (ՖՎ) էլեկտրակայանի ծրագրի» (Ծրագիր) նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման նպատակով:

Ծրագիրը նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման (ՆՖԿՏՇ) հիմունքներով կմշակվի հատուկ նշանակության ընկերության կողմից (Ծրագրի ընկերություն), որի 100% սեփականատերը պետք է հանդիսանա Հաղթող ճանաչված հայտատուն: Այս Ծրագրի համար Ծրագրի ընկերությունը պետք է հիմնադրվի և տեղակայված լինի Հայաստանի Հանրապետությունում:

Հիմնադրամն այժմ հրավիրում է հավանական այն հայտատուներին (Հավանական հայտատու), ովքեր կարող են բավարարել Նախաորակավորման հրավերում (ՆՈՀ) սահմանված որակավորման չափորոշիչներին, ՆՈՀ փաստաթղթի պահանջների համաձայն ներկայացնել կնքված նախաորակավորման հայտերը (Նախաորակավորման հայտ): Այնուամենայնիվ, մասնակցության իրավունք ունենալու համար Հավանական հայտատուներից կպահանջվի գրանցվել Հիմնադրամում և պաշտոնապես ձեռք բերել ՆՈՀ փաստաթուղթը՝ դրա դիմաց Հիմնադրամի հաշվեհամարին փոխանցելով չփոխհատուցվող վճար՝ **ռեզիդենտների համար ՀՀ 24,000 դրամի և ոչ ռեզիդենտների համար 50 ԱՄՆ$ գումարի չափով**:

Ռեզիդենտների համար
ՇԱՀԱՌՈՒ ԲԱՆԿ՝ HSBC բանկ Հայաստան ՓԲԸ, Երևան, ՀՀ
217001007855004 AMD

Ոչ ռեզիդենտների համար
ՇԱՀԱՌՈՒ ԲԱՆԿ՝ HSBC բանկ Հայաստան ՓԲԸ, Երևան, ՀՀ
SWIFT – MIDLUM22
217001007855102 USD
ԹՂԹԱԿԻՑ ԲԱՆԿ՝ HSBC Bank USA
New York US
SWIFT address: MRMDUS33
Correspondent A/C No. 000-05145-4
ABA: 021001088

Վճարումը հիմնավորող փաստաթուղթը ներկայացնելուց հետո Հիմնադրամը Հավանական հայտատուներին կներկայացնի ՆՈՀ փաստաթուղթը՝ Հավանական հայտատուներից յուրաքանչյուրի կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին փաստաթուղթն ուղարկելով կամ Հավանական հայտատուների կողմից ներկայացված կրիչի վրա նյութը ներբեռնելով: ՆՈՀ փաստաթուղթը կներկայացվի միմիայն PDF ձևաչափով:

Միայն նախաորակավորված հայտատուները (Նախաորակավորված հայտատուներ) իրավասու կլինեն մասնակցել ընտրության գործընթացի Հայտերի ներկայացման հրավերի (ՀՆՀ) փուլին, որը Հիմնադրամը կնախաձեռնի սահմանված կարգով:

Նախաորակավորման հայտերը պետք է լինեն փաթեթավորված, պիտակավորված և պետք է ներկայացվեն սույն ՆՈՀ-ի պահանջների համաձայն՝ մինչ **2017թ-ի հունիսի 16-ը՝ Երևանի ժամանակով 15:30-ը:**

Հիմնադրամի կոնտակտային տվյալներ և նախաորակավորման հայտերը ներկայացնելու հասցե:

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ»
Պռոշյան 32 փողոց, առաջին նրբանցք, ք. Երևան, ՀՀ
Հեռ.՝ (37410) 588011
Ֆաքս՝ (37410) 541732
Էլ. Փոստի հասցե՝ r2e2fund@gmail.com
Կայք՝ www.r2e2.am